ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՊՄՀ

ՈՒՍՈՒՑՉԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔԻ ՍՏՈՒԳՈՒՄ

2023

ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 2

ԽՄԲԻ ՀԱՄԱՐը	
ՆՍՏԱՐԱՆԻ ՀԱՄԱՐը	

Հարգելի՛ ուսուցիչ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք: Եթե չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք դրան անդրադառնալ ավելի ուշ:

Թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը կարող եք օգտագործել սևագրության համար:

1 **Ինչպե՞ս են կոչվում ինտերվալի հնչյունները:**

1) Հիմնական ձայն և վերին ձայն
2) Հիմնամաս և վերնամաս
3) Հիմք և վերին ձայն
4) Հիմք և գագաթ

2 **Ընտրել ճիշտ տարբերակը.**

«Լադի այս տեսակի հիմնական հատկանիշը առաջին և երրորդ աստիճանների միջև ընկած մեծ տերցիան է»:

1) Մաժոր լադ
2) Մինոր լադ
3) Դիատոնիկ լադ
4) Քրոմատիկ լադ

3 **Ինչպե՞ս է կոչվում աստիճանաբար ուժեղացումը երաժշտության մեջ:**

1) Սֆորցանդո
2) Դինամիկա
3) Դիմինուենդո
4) Կրեշչենդո

4 **Ընտրել տարբերակը, որում ճիշտ են նշված հնչյունի չորս հիմնական հատկությունները:**

1) ուժգնություն, բարձրություն, մեծություն, տեմպ
2) ուժգնություն, մեղմացում, կրկնում, տևողություն
3) ուժգնություն, բարձրություն, տևողություն, տեմբր
4) ուժգնություն, մեղմացում, սահունություն, տեմպ

5 **Ո՞ր շարքում է թվարկված ինտերվալների ճիշտ հաջորդականությունը:**

1) Կվարտա, սեքստա, օկտավա
2) Օկտավա, սեքստա, կվինտա
3) Պրիմա, տերցիա, կվինտա
4) Սեկունդա, տերցիա, կվարտա

6 **Ի՞նչ ձևով կարող են հնչել ինտերվալները և որո՞նք են դրանք:**

1) Չորս ձևով՝ պրիմային, կվարտային, կվինտային և օկտավային:
2) Երեք ձևով՝ մաքուր, մեծ և փոքր:
3) Երկու ձևով՝ քրոմատիկ և դիատոնիկ:
4) Երկու ձևով՝ մեղեդային և հարմոնիկ:

7 **Նշել պոլիֆոնիա հասկացության ճիշտ բնորոշումը:**

1) Պոլիֆոնիան բազմաձայնության տեսակ է, որն ունի հոմոֆոն-հարմոնիկ շարադրանք:
2) Պոլիֆոնիան բազմաձայնության տեսակ է, որտեղ գերիշխողը մեղեդին է:
3) Պոլիֆոնիան բազմաձայնության տեսակ է, որտեղ գերիշխողը հարմոնիկ հաջորդականությունն է:
4) Պոլիֆոնիան բազմաձայնության տեսակ է, որտեղ բոլոր ձայներն ինքնուրույն նշանակություն ունեցող մեղեդիներ են:

8 **Ո՞ր շարքում են ներկայացված ռոմանտիզմի ներկայացուցիչները:**

1) Վիվալդի, Բախ, Բրամս
2) Շուբերտ, Գերշվին, Շոպեն
3) Ռիմսկի-Կորսակով, Բեթհովեն, Բրամս
4) Մենդելսոն, Գրիգ, Շոպեն

9 **Ո՞ր շարքում են ներկայացված բարոկոյի կոմպոզիտորները:**

1) Չայկովսկի, Յ.Շտրաուս, Գրիգ
2) Բեթհովեն, Շտրաուս, Բախ
3) Վիվալդի, Բախ, Հենդել
4) Շուբերտ, Շուման, Շոպեն

10 **Ո՞ր դարում է ձևավորվել դասական սիմֆոնիան:**

1) XIX
2) XVI
3) XVII
4) XVIII

11 **Ո՞ր դարում և ո՞րտեղ է ձևավորվել օպերայի ժանրը:**

1) XVIIդ., Իտալիա
2) XVդ, Անգլիա
3) XIXդ, Գերմանիա
4) XVIIIդ, Ֆրանսիա

12 **Նշել ստեղնային-փողային նվագարանները:**

1) Ակորդեոն, երգեհոն
2) Կլավեսին, դաշնամուր
3) Չելեստա, ֆիսհարմոն
4) Ռոյալ, սպինետ

13 **Ամերիկացի կոմպոզիտոր, «Պորգի և Բես» օպերայի հեղինակ:**

1) Գ.Միլլեր
2) Դ.Էլինգթոն
3) Ջ.Գերշվին
4) Լ.Արմստրոնգ

14 **Ռուս կոմպոզիտոր, «Տրոյկա» ստեղծագործության հեղինակ:**

1) Պրոկոֆև
2) Գլինկա
3) Մուսորգսկի
4) Սվիրիդով

15 **Ո՞ր նվագարանն է բնութագրում գայլին Պրոկոֆևի «Պետյա և գայլը» սիմֆոնիկ հեքիաթում:**

1) Կլառնետ
2) Գալարափող
3) Շեփոր
4) Թավջութակ

16 **Ո՞ր երաժշտական ոճն է միավորել Դյուկ Էլինգթոնին, Չարլի Պարկերին, Բենի Գուդմենին, Արտեմի Այվազյանին:**

1) Ռեպ
2) Ռոք
3) Ջազ
4) Պոպ

17 **Առաջին հայկական ջազային նվագախմբի ստեղծողը:**

1) Ց.Վարդազարյան
2) Ա.Այվազյան
3) Մ.Վարդազարյան
4) Կ.Օրբելյան

18 **Ո՞ր դարաշրջանում է ապրել և ստեղծագործել Ա.Վիվալդին:**

1) Միջնադար
2) Վերածնունդ
3) Ռոմանտիզմ
4) Բարոկո

19 **Նշել ճիշտ տողը, որտեղ բոլոր երգերը Ռոմանոս Մելիքյանինն են:**

1) «Աշխատանքի երգը»; «Հայաստան»; «Արջամուկը»; «Կովկասի քաջեր»
2) «Երգ մայրիկիս»; «Վարդը»; «Անձրևն եկավ»; «Ես իմ անուշ Հայաստանի»
3) «Շափաղ կուտաս»; «Մանուկն ու ջուրը»; «Մի լար»; «Ծիտիկի սերը»
4) «Անձրևի երգը»; «Պուտ-պուտիկ»; «Նապաստակի երգը»; «Իմ սիրելի Երևան»

20 **Ո՞վ է «Ես մեկ ծառ եմ ծիրանի» երգի հեղինակը:**

1) Շիրին
2) Սայաթ-Նովա
3) Ջիվանի
4) Շերամ

21 **Նոր տարվա ո՞ր երգի բառերն են. «Թևին առած տարին այս նոր»:**

1) Խոսք՝ Մկրտիչ Կորյունի, երաժշտ.՝Գեղունի Չթչյանի «Մանուկներն ու Ձմեռ պապին»
2) Խոսք՝ Նանսեն Միքայելյանի, երաժշտ.՝ Ռոբերտ Ամիրխանյանի «Նոր տարվա հանդես»
3) Խոսք՝ Լիպարիտ Սարգսյանի, երաժշտ.՝ Արեգ Լուսինյանի «Նոր տարվա երգ-պար»
4) Խոսք՝ Նանսեն Միքայելյանի, երաժշտ.՝ Արեգ Լուսինյանի «Երգ ձյունանուշիկի և Ձմեռ պապիկի մասին»

22 **Ե՞րբ է ստեղծվել և բեմադրվել «Անտունի»բալետը:**

1) 1975թ.
2) 1967թ.
3) 1969թ.
4) 1971թ.

23 **Նշված բալետներից ո՞րի հեղինակն է կոմպոզիտոր Գրիգոր Եղիազարյանը:**

1) «Գայանե»
2) «Անմահություն»
3) «Երջանկություն»
4) «Անուրջների լիճը»

24 **Նշված օպերաներից ո՞րի հեղինակն է կոմպոզիտոր Էդգար Հովհաննիսյանը:**

1) «Հերոսուհին»
2) «Սասունցի Դավիթ»
3) «Ալմաստ»
4) «Ճանապարհորդություն դեպի Էրզրում»

25 **Նշել ճիշտ տողը, որտեղ բոլոր երգերը ստեղծված են Հովհաննես Թումանյանի խոսքերով:**

1) Միքայել Միրզայան «Մարտ»; Կոմիտաս՝ «Կաքավի երգը»; Ալեքսանդր Հարությունյան՝ «Հայրենիքիս հետ»; Ռոմանոս Մելիքյան՝ «Աշնան երգ»:
2) Արամ Խաչատրյան՝ «Գարուն Երևան»; Երվանդ Սահառունի՝ «Ձա՜ն հայրենիք»; Մարտին Վարդազարյան՝ «Հեքիաթային ճանապարհ»; Սոֆյա Սամվելյան՝ «Արտուտիկ»:
3) Ռոմանոս Մելիքյանի՝ «Պսակ-պսակ»; Աշոտ Սաթյան՝ «Աղբյուրի մոտ»; Աշոտ Սաթյան՝ «Ես իմ անուշ Հայաստանի»; Ռոբերտ Պետրոսյան՝ «Պատգամ որդուս»:
4) Ռոմանոս Մելիքյան՝ «Վարդը»; Ռոմանոս Մելիքյան՝ «Մանուկն ու ջուրը»; Աշոտ Սաթյան՝ «Մարտիկի երգը»; Ազատ Մանուկյան՝ «Աշուն»

26 **Նշել ճիշտ տողը, որտեղ բոլոր երգերը և ռոմանսները ստեղծված են Ավետիք Իսահակյանի խոսքերով:**

1) Էդգար Հովհաննիսյան՝ «Հայաստան»; Խաչատուր Ավետիսյան՝ «Մախմուր աղջիկ»; Ռոբերտ Ամիրխանյան՝ «Հայի աչքեր»; Տիգրան Չուխաջյան՝ «Գարուն»:
2) Արմեն Տիգրանյան՝ «Սև աչերեն շատ վախեցիր»; Հարո Ստեփանյան՝ «Հեյ Արագած»; Ռոբերտ Պետրոսյան՝ «Արարատի ծեր կատարին; Էդվարդ Աբրահամյան՝ «Ես երգիչ եմ»:
3) Ալեքսանդր Սպենդիարյան՝ «Այ Վարդ»; Ռոմանոս Մելիքյան՝ «Ծիտիկի սերը»; Անտոն Մայիլյան՝ «Արևի պես ճիթ անենք»; Միքայել Միրզայան՝«Ձենով Օհանի ափսոսանքը»:
4) Արամ Սաթյան՝ «Կապույտ երազ»; Դանիել Ղազարյան՝ «Ուռի»; Ալեքսանդր Հարությունյան՝ «Ուռենու տակ»; Էդգար Հովհաննիսյան՝ «Էրեբունի-Երևան»:

27 **Նշել ճիշտ տողը, որտեղ Ավետ Տերտերյանի նշված Սիմֆոնիաներում հնչում են ոչ ավանդական, ոչ դասական նվագարաններ:**

1) Երկրորդ; Հինգերորդ; Վեցերորդ; Ութերորդ:
2) Առաջին; Չորրորդ; Հինգերորդ; Ութերորդ:
3) Առաջին; Երրորդ; Հինգերորդ; Յոթերորդ:
4) Երկրորդ; Երրորդ; Վեցերորդ; Ութերորդ:

28 **Նշել ճիշտ տողը, որտեղ բոլոր օպերաների հեղինակը Հարո Ստեփանյանն է:**

1) «Զեմիրե»; «Մարո»; «Քաջ Նազար»; «Լուսաբացին»:
2) «Անուշ»; «Լուսաբացին»; «Չարի վերջը»; «Խորտակում»:
3) «Քաջ Նազար»; «Սասունցի Դավիթ»; «Նունե»; «Հերոսուհին»:
4) «Խաչատուր Աբովյան»; «Սայաթ-Նովա»; «Գիքոր»; «Ալմաստ»:

29 **Նշել ճիշտ տողը, որտեղ բոլոր բալետների հեղինակը Էդգար Հովհաննիսյանն է:**

1) «Երջանկություն»; «Սևան»; «Անտունի»; «Անմահություն»:
2) «Ձյունե թագուհին»; «Գայանե»; «Անմահություն»; «Դիմակահանդես»:
3) «Անուրջների լիճը»; «Մարմար»;«Սևան»; «Սպարտակ»:
4) «Հավերժական կուռք»; «Անտունի», «Մարմար»; «Երկնագույն նոկտյուրն»:

30 **Նշել ճիշտ տողը, որտեղ նշված են Կոմիտասի մշակմամբ այն ժողովրդական մեղեդիները, որոնք կիրառված են Էդգար Հովհաննիսյանի «Անտունի» բալետում:**

1) «Շողեր ջան», «Երկինքն ամպել ա», «Մարալ ջան», «Խնկի ծառ»:
2) «Անտունի», «Կանչե կռունկ», «Մոկաց Միրզա», «Կարոս խաչ»:
3) «Հո՜յ, Նազան», «Հանիկ նայ», «Դանդան, դանի», «Աղվես»:
4) «Անտունի», 2. «Կռունկ», 3.«Սիփանա քաջեր», 4. «Շուշիկի»:

31 **Ի՞նչ է դիատոնիկ հնչյունաշարը:**

1) Հնչյունաշարը կազմված է հիմնական հնչյունների ալտերացիայով:
2) Հնչյունաշարը կազմված է հիմնական, չփոփոխված հնչյուններից:
3) Հնչյունաշարը կազմված է հիմնական հնչյունների քրոմատիկ փոխոխմամբ:
4) Հնչյունաշարը կազմված է հիմնական հնչյունների կրկնակի փոխոխմամբ:

32 **Ինչպե՞ս է դիատոնիզմը դրսևորվում հայկական ժողովրդական երգերում:**

1) Հայկական ժողովրդական երգերին բնորոշ է քրոմատիզմը:
2) Միևնույն հնչյունի բարձր և ցածր տարբերակները հաջորդում են միմյանց անմիջականորեն:
3) Միևնույն հնչյունի բարձր և ցածր տարբերակները հաջորդում են միմյանց որոշ ընդմիջումով:
4) Հայկական ժողովրդական երգերում հնչյունների ալտերացված տարբերակումները հանդիպում են քրոմատիկ հաջորդականությամբ:

33 **Ինչպե՞ս են ցած հնչյունները հանդես գալիս հայկական ժողովրդական երգերի հնչյունաշարում:**

1) Ցած հնչյունները հանդես են գալիս կվինտա տարածության վրա:
2) Ցած հնչյունները հանդես են գալիս կվարտա տարածության վրա:
3) Ցած հնչյունները հանդես են գալիս անկանոն:
4) Ցած հնչյունները հանդես են գալիս տերցիա տարածության վրա:

34 **Հայկական ժողովրդական երաժշտության լադերի (ձայնակարգերի) ոչ օկտավայնությունը և դրսևորման տեսակները:**

1) օկտավա տարածության վրա օժանդակ հենակետն ունի նույն ֆունկցիոնալ նշանակությունը:
2) լադի (ձայնակարգի) հնչյունաշարում կրկնվող հնչյուններն ունեն տարբեր ֆունկցիոնալ նշանակություն:
3) ֆունկցիոնալ տեսակետից որոշ հնչյուններ օկտավա տարածության վրա կրկնվում են:
4) օկտավա տարածության վրա տոնիկան ունի նույն ֆունկցիոնալ նշանակությունը:

35 **Նշել ճիշտ տողը, որտեղ սփյուռքահայ կոմպոզիտորների անուններ են:**

1) Նիկոլ Գալանտերյան; Շառլ Ազնավուր; Ալան Հավհաննես; Բարսեղ Կանաչյան:
2) Միքայել Թարիվերդին; Ժորժ Կառվարենց; Երվանդ Երկանյան; Մարտին Մազմանյան:
3) Արա Պարթևյան; Ստեփան Բաբաթորոսյան; Նարինե Զարիֆյան; Երվանդ Սահառունի:
4) Սոֆա Ազնաուրյան; Գեղունի Չթչյան; Հարո Ստեփանյան; Տիգրան Չուխաջյան:

36 **Նշել «Գարուն ա» ժողովրդական երգի Կոմիտասի խմբերգային մշակման մեջ կիրառված բազմաձայնության տեսակը:**

1) հոմոֆոն-պոլիֆոն:
2) հոմոֆոն;
3) պոլիֆոն;
4) հոմոֆոն-հարմոնիկ;

37 **Նշել ճիշտ տողը, որտեղ հայ դիրիժորների անուններ են:**

1) Կարեն Դուրգարյան, Ստեփան Բաբաթորոսյան, Ստեփան Լուսիկյան, Ռոբերտ Պետրոսյան:
2) Էդգար Հովհաննիսյան, Ալեքսանդր Հարությունյան, Գևորգ Արմենյան, Արմեն Տիգրանյան:
3) Նիկողայոս Տիգրանյան, Հարո Ստեփանյան, Գրիգոր Եղիազարյան, Աշոտ Սաթյան:
4) Միքայել Մալունցյան, Դավիթ Խանջյան, Գևորգ Բուդաղյան, Ռուբեն Ասատրյան:

38 **Նշել ճիշտ տողը, որտեղ բոլոր խմբերգերի հեղինակը Ռոբերտ Պետրոսյանն է:**

1) «Ծիտիկի սերը»; «Վասպուրական»; «Անձրևի երգը»; «Մուսա լեռան կարոտը»:
2) «Մեր հին ու նոր Երևան», «Արաքսն ասաց», «Խաչքար», «Մեր սուրբ զոհեր»:
3) «Իմ ուսուցիչ», «Եղբայր եմք մենք», «Աղջկա երգը», «Ուրախության ձոներգ»:
4) «Գարնանային», «Փշատենի փոքրիկ ծառ», «Այբ, բեն, գիմ», «Գարուն եկավ»:

39 **Նշել ճիշտ տողը, որտեղ հայ նշանավոր օպերային երգիչների անուններ են:**

1) Ռոբերտ Բաբուրյան; Բարսեղ Թումանյան; Վարդուհի Վարդանյան; Վարդան Բաղալյան:
2) Նար Հովհաննիսյան; Գոհար Գալաչյան; Ռազմիկ Ամյան; Ալլա Լևոնյան :
3) Գոհար Գասպարյան;Մարիետա Անտոնյան; Զարուհի Բաբայան; Արսեն Գրիգորյան:
4) Պավել Լիսիցյան; Հայկանուշ Դանիելյան; Տաթևիկ Սազանդարյան; Ավագ Պետրոսյան:

40 **Նշել ճիշտ տողը, որտեղ բոլոր երաժշտական ստեղծագործությունների գրական տեքստի հեղինակը Պարույր Սևակն է:**

1) Էդգար Հովհաննիսյան «Սարդարապատ»; Ռոբերտ Պետրոսյան «Պատգամ որդուս»; Արեգ Լուսինյան «Իմ ուսուցիչ»; Առնո Բաբաջանյան «Մեր սիրելի Երևան»:
2) Էդգար Հովհաննիսյան «Հայաստան»; Ռոբերտ Պետրոսյան «Հայաստան» Արեգ Լուսինյան «Զանգն առաջին»; Մելիք Մավիսակալյան «Ջան, Հայաստան»:
3) Էդգար Հովհաննիսյան «Էրեբունի-Երևան»; Գեղունի Չթչյան «Անձրևի երգը»; Ալեքսանդր Դոլուխանյան «Երևանի գիշերները»; Արամ Խաչատրյան «Գարուն Երևան»:
4) Էդգար Հովհաննիսյան «Հայաստան»; Էդգար Հովհաննիսյան «Էրեբունի-Երևան»;
Հարո Ստեփանյան «Անլռելի զանգակատուն» օրատորիա; Էդգար Հովհաննիսյան «Սարդարապատ»:

41 **Նշել ճիշտ տողը, որտեղ բոլոր ստեղծագործությունների հեղինակը Արտեմի Այվազյանն է:**

1) «Կարինե»; «Վերադարձի երգ»; «Արջի վիշտը»; «Դպրոցի ճամփան»:
2) «Աղջկա երգը»; «Հայկական ռապսոդիա»; «Հայաստան»; «Կարինե»:
3) «Աղջկա երգը»; «Հեքիաթային ճանապարհ»; «Արևիկ»; «Էրեբունի-Երևան»:
4) «Հայաստան»; «Իմ Երևան»; «Իմ ուսուցիչ»; «Միշտ առույգ»:

42 **Նշել ճիշտ տողը, որտեղ բոլոր երգերի հեղինակը Արեգ Լուսինյանն է:**

1) «Խուտուտ-մուտուտ»; «Աշուն»; «Երգ ձյունանուշիկի և ձմեռ պապիկի մասին»; «Ծիտիկի սերը»:
2) «Բարձրիկ Հայաստան»; «Ուղիղ կարգով»; «Պատգամ որդուս»; «Պսակ-պսակ»:
3) «Ողջույն ուսուցչին»; «Նոր տարվա երգ-պար»; «Զանգն առաջին»; «Բարձրիկ Հայաստան»:
4) «Ողջույն ուսուցչին»; «Զանգն առաջին»; «Երևանի գիշերները»; «Անձրևի երգը»:

43 Ընտրել երաժշտական ստեղծագործության հեղինակին և ստեղծագործությունը՝ ըստ նոտագրված օրինակի:



1) Գլինկա «Կամարինյան»
2) Մոցարտ Սիմֆոնիա թ.40
3) Մենդելսոն «Երգ առանց խոսքի»
4) Շոպեն Պոլոնեզ

44 Ընտրել երաժշտական ստեղծագործության հեղինակին և ստեղծագործությունը ըստ նոտագրված օրինակի:



1) Յ.Շտրաուս «Վալս»
2) Շոպեն «Նոկտյուրն»
3) Չայկովսկի «Փաթիլների պարը»
4) Չայկովսկի «Ծաղիկների վալսը»

45 Ընտրել երաժշտական ստեղծագործության հեղինակին և ստեղծագործությունը՝ ըստ նոտագրված օրինակի:



1) Շոպեն՝ «Նոկտյուրն»
2) Ռիմսկի-Կորսակով՝ «Շահարազադե»
3) Մենդելսոն՝ «Վենետիկի գոնդոլավարի երգը»
4) Մոցարտ՝ «Օրորոցային»

46 Ընտրել երաժշտական ստեղծագործության հեղինակին և ստեղծագործությունը՝ ըստ նոտագրված օրինակի:



1) Բիզե Նախերգանք «Կարմեն» օպերայից
2) Մոցարտ «Փոքրիկ գիշերային սերենադ»
3) Սվիրիդով «Տրոյկա»
4) Չայկովսկի «Սերենադ»

47 **Ընտրել երաժշտական ստեղծագործության հեղինակին և ստեղծագործությունը՝ ըստ նոտագրված օրինակի:**



1) Մուսորգսկի՝ «Պատկերներ ցուցահանդեսից»
2) Ռիմսկի-Կորսակով՝ «Շահարազադե»
3) Գերշվին՝ Ռապսոդիա բլյուզի ոճով
4) Գրիգ՝ «Անիտրայի պարը»

48 **Նշել ճիշտ տողը, որտեղ նշված են «Հովիվ» հայկական ժողովրդական երգի ձայնակարգի տոնիկան և օժանդակ հենակետը:**



1) դո,ռե:
2) սի. մի
3) սի, ռե
4) դո, մի

49 **Որոշել «Հանի՛կ նայ» հայկական ժողովրդական երգի ժանրը:**



1) աշխատանքային
2) Պատմական
3) պանդխտության
4) պարերգ

50 Որոշել Ք. Կարա-Մուրզայի մշակմամբ «Լեպհո՛, լե՛, լե՛» ժողովրդական երգի ձևը:



1) ռոնդո:
2) միամաս,
3) երկմաս,
4) եռամաս,

51 Որոշել Արմեն Տիգրանյանի «Դավիթ Բեկ» օպերայի «Տղամարդկանց քայլերգի» ձևը:



1) ռոնդո
2) միամաս
3) երկմաս
4) եռամաս

52 Ո՞ր երգն է նոտագրված:



1) «Սարեն ելավ»:
2) «Շողեր ջան»;
3) «Իմ չինարի յարը»;
4) «Սոնա յար»;

53 «Շողեր ջան» ժողովրդական երգի լադի (ձայնակարգի) ո՞ր ձայնաստիճանն է ալտերացված:



1) դո:
2) լա;
3) սի բեմոլ;
4) սի բեկար;

54 Որոշել «Հո՛յ, Նազան» ժողովրդական երգի լադը (ձայնակարգը):



1) դորիական:
2) էոլական;
3) իոնական;
4) փռյուգիական;

55 Նշել երկու տարբերակները, որտեղ կառուցված են միայն մաքուր կվինտա ինտերվալներ դեպի վեր:

1) սի-ֆա, ռե բեմոլ -լա, դո- սո
2) ռե-լա բեմոլ, սի բեմոլ -ֆա, մի բեմոլ -լա բեմոլ
3) սի բեմոլ -ֆա, դո դիեզ-սո դիեզ, սի-ֆա դիեզ
4) լա-մի, դո-սո, ֆա դիեզ-դո դիեզ
5) ֆա դիեզ-դո, սի-ֆա, լա-մի բեմոլ

56 **Ընտրել տրված լուծված երաժշտամաթեմատիկական օրինակներից երկու ճիշտ տարբերակները՝ հաշվի առնելով ինտերվալների տոնային և աստիճանային մեծությունը:**

1) փ.3 + փ.3 = մծց.4
2) մաք.5 + մ.2 = փքց.7
3) մաք.4 +մ.3 = մ.6
4) մծց.2 + փքց.5 = փ.6
5) մծց.4 + մ.3 = փ.7

57 **Ընտրել տրված լուծված երաժշտամաթեմատիկական օրինակներից երկու սխալ տարբերակները՝ հաշվի առնելով ինտերվալների տոնային և աստիճանային մեծությունը:**

1) փքց.7- մաք.4 = փ.3
2) մծց.5 – փ.3 = մաք.4
3) փ.7 - մաք.5 = փ.3
4) մծց.4 - մծց.2 = մ.3
5) մ.7 - փ.3 = փ.6

58 **Նշել երկու գործիքային ժանրեր:**

1) Տոկատ
2) Օպերա
3) Կանտատ
4) Ֆանտազիա
5) Օրատորիա

59 **Նշել երկու ճիշտ տողերը, որտեղ վոկալ երաժշտության ժանրերն են:**

1) Կանտատ, ռոմանս, բալլադ
2) Ռոմանս, երգ, օրատորիա
3) Արիա, վոկալիզ, արիոզո
4) Երգ, սյուիտ, սաղմոս
5) Սպիրիչուել, մադրիգալ, երգ

60 **Նշել երկու կոմպոզիտորների, ովքեր ստեղծագործել են նաև բալետային ժանրում:**

1) Մոցարտ
2) Շոպեն
3) Գլինկա
4) Շուբերտ
5) Բեթհովեն

61 **Նշել երկու բազմաձայն ստեղծագործություններ, որոնցում թեման անցնում է բոլոր ձայներում:**

1) Ֆուգատո
2) Խորալ
3) Սաղմոս
4) Ֆուգա
5) Կանոն

62 **Նշել երկու լեհական ժողովրդական պարեր:**

1) Պոլոնեզ
2) Պոլկա
3) Տրեպակ
4) Մազուրկա
5) Մենուետ

63 **Նշել Բեթհովենի գրչին պատկանող երկու ստեղծագործություններ:**

1) «Օզեի մահը»
2) Ռեքվիեմ
3) «Պրոմեթևսի արարչությունը»
4) Սերենադ
5) «Ֆիդելիո»

64 **Նշել ժամանակային երկու արվեստ:**

1) Քանդակագործություն
2) Կերպարվեստ
3) Երաժշտություն
4) Ճարտարապետություն
5) Գրականություն

65 **Նշել Ռիմսկի-Կորսակովի երկու օպերա:**

1) «Կախարդական սրինգ»
2) «Ոսկե աքաղաղը»
3) «Ռուսլան և Լյուդմիլա»
4) «Դոն Ժուան»
5) «Ձյունանուշ»

66 **Համապատասխանեցնել երաժշտական տերմիններն իրենց սահմանումներին:**

Ա) տակտ
Բ) տեմպ
Գ) ռիթմ
Դ) մեղեդի

1) միաձայն արտահայտված երաժշտական միտքը:
2) իրար հաջորդող տարբեր տևողությունների փոխհարաբերությունը,
3) մի շեշտից մյուսն ընկած հատվածը,
4) կայուն և անկայուն աստիճանների փոխհարաբերությունը,
5) երկու հնչյունների միջև ընկած հեռավորությունը,
6) երաժշտության մեջ դանդաղ, միջին և արագ ընթացքը,

Ա	Բ	Գ	Դ

67 **Համապատասխանեցնել ստեղծագործությունը՝ հեղինակած կոմպոզիտորին:**

Ա) Դաշնամուրային ռապսոդիա
Բ) Հունգարական ռապսոդիա
Գ) Ռապսոդիա բլուզի ոճով
Դ) Հայկական ռապսոդիա

1) Շտոգարենկո
2) Իպոլիտով-Իվանով
3) Լիստ
4) Բրամս
5) Գերշվին
6) Շոպեն

Ա	Բ	Գ	Դ

68 **Համապատասխանեցնել կոմպոզիտորների ազգությունը:**

Ա) Շոպեն
Բ) Մենդելսոն
Գ) Բիզե
Դ) Մուսորգսկի

1) Հունգարացի
2) Ռուս
3) Ֆրանսիացի
4) Գերմանացի
5) Լեհ
6) Ավստրիացի

Ա	Բ	Գ	Դ

69 **Համապատասխանեցնել օպերաները հեղինակած կոմպոզիտորին:**

Ա) «Հեքիաթ Սալթան թագավորի մասին»
Բ) «Պորգի և Բես»
Գ) «Ռուսլան և Լյուդմիլա»
Դ) «Հսկան»

1) Մոցարտ
2) Գլինկա
3) Պրոկոֆև
4) Գերշվին
5) Ռիմսկի-Կորսակով
6) Մուսորգսկի

Ա	Բ	Գ	Դ

70 **Համապատասխանեցնել կոմպոզիտորներին և նրանց ծննդավայրը:**

Ա) Մոցարտ
Բ) Բախ
Գ) Բեթհովեն
Դ) Շտրաուս

1) Բեռլին
2) Վիեննա
3) Զալցբուրգ
4) Այզենախ
5) Բոնն
6) Լայպցիգ

Ա	Բ	Գ	Դ

71 **Ի՞նչ նվագարանների են տիրապետել նշված ջազային երաժիշտները:**

Ա) Բենի Գուդմեն
Բ) Գլեն Միլլեր
Գ) Դյուկ Էլինգթոն
Դ) Պոլ Մոտյան

1) Սաքսաֆոն
2) Դաշնամուր
3) Կլառնետ
4) Տրոմբոն
5) Թմբուկ
6) Շեփոր

Ա	Բ	Գ	Դ

72 **Համապատասխանեցնել գրական ստեղծագործությունները հեղինակներին:**

Ա) «Հեքիաթ Սալթան թագավորի մասին»
Բ) «Ձյունանուշ»
Գ) «Դիմակահանդես»
Դ) «Պեր Գյունտ»

1) Ռելշտաբ
2) Իբսեն
3) Պուշկին
4) Մուլլեր
5) Լերմոնտով
6) Օստրովսկի

Ա	Բ	Գ	Դ